Ը-11607 / 27.10.25

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող՝

Արամ Մեյմարյան

«13» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 238-25

Նախաձեռնող՝ ***«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ***
Սյունիքի մարզ, Սիսիան, Ա. Մանուկյան, 15

Գործունեությունը՝ ***Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի Գ. Նարեկացու փողոց հասցեում նախատեսվող բժշկական կենտրոնի կառուցում***
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 238 - 25

«13» 10 **2025թ.**

Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի Գ. Նարեկացու փողոց հասցեում նախատեսվող բժշկական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Աշտարակ բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի Գ. Նարեկացու հասցեում նախատեսվում է իրականացնել բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության պատվիրատու հանդիսանում է քաղաքաշինության Կոմիտեն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նկարագրական մաս. Բժշկական կենտրոնը նախատեսվում է կառուցվել «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, որը գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի Գ. Նարեկացու փողոց հասցեում:

Ներկայումս նշված տարածքում գործունեություն է իրականացնում «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն:

Աշտարակի բժշկական կենտրոնի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է Աշտարակ բնակավայրի կենտրոնական մասում (Աշտարակի

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

համայնքապետարանի մոտ 800մ դեպի հարավ-արևմուտք), որտեղ հարևանությամբ առկա են նաև բնակելի շենք-շինություններ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը մտնում է Արագած լեռան ստորին լանջերի մեջ, գտնվում է Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բացարձակ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի կենտրոնում, Երևան քաղաքից 13 կմ հյուսիս-արևմուտք:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդականի հասակի լավաները, ռելիեֆը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված:

Համաձայն գնահատման հաշվետվության գործունեության ենթակա տարածքում բացակայում են ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Նախատեսվող գործունեության տարածքում բերրի հողաշերտը բացակայում է:

Տվյալ տարածքի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են կառուցապատման համար, տարածքում ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության ենթակա և դրան հարակից տարածքներում չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր), տարածքում չեն արձանագրվել ՀՀ Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքը չի գտնվում որևէ բնության հատուկ պահպանվող տարածքում, տարածքի հարևանությամբ չկան ԲՀՊՏ-ներ, պատմամշակութային արժեք ներկայացնող և բնության հուշարձաններ:

Նախատեսվող բժշկական կենտրոնի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 0.88255 հա:
- հիվանդանոցի մասնաշենքի կառուցապատման մակերես, ներառյալ արտաքին աստիճաններ և թեքահարթակներ՝ 1575.0 քմ,
- վարչական մասնաշենքի կառուցապատման մակերես, ներառյալ արտաքին աստիճաններ և թեքահարթակ՝ 353,5 քմ,
- շտապ օգնության մասնաշենքի կառուցապատման մակերես, ներառյալ արտաքին աստիճաններ և թեքահարթակ՝ 215.0 քմ,
- կանաչապատ մակերես՝ 1500.0 քմ / 17.0% և ջրթափանց արահետ՝ 3.0%,

ընդհանուր՝ 20.0%:

Նախատեսվող շինության տեղադիրքը համապատասխանեցված և հարմարեցված կլինի գոյություն ունեցող նոր կառուցվող մասնաշենքերին:

Բժշկական կենտրոնը կունենա երկու մասնաշենք, մեկ ստորգետնյա և չորս վերգետնյա հարկեր:

Նախատեսվում է ճանապարհներ՝ մեքենաների, շտապ օգնության, հրշեջ, տեխնիկական սպասարկման մեքենաների մոտեցումների համար:

Շինության երկրորդ՝ վարչական փոքր մասնաշենքը, գլխավորին կմիանա երկրորդ հարկից՝ շենքին միացնող կամրջով:

Տարածքում նախատեսվում են ավտոկայանատեղիներ՝ դիմացի հատվածում բնակչության, իսկ շենքի հետևի հատվածում՝ աշխատակիցների համար:

Առաջին հարկում նախատեսվում է ընդունարանը՝ շտապ օգնության մեքենայի մոտեցմամբ, ծածկով, գլխավոր մուտքը՝ ադմինիստրացիոն հատվածով և կանանց

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կոնսուլտացիայի հատվածը, որը կմիանա երկրորդ հարկի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքին:

Երկրոդ հարկում նախատեսվում է ծնարանային հատվածը, մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը և միջանցքը՝ ռեկրեացիոն հատվածը, որը կամրջով կմիանա ադմինիստրացիոն հատվածին:

Երրորդ հարկում նախատեսվում է մանկական թերապիան և թերապևտիկ բաժանմունքը:

Չորրորդ հարկում նախատեսվում է վիրահատական, վիաբուժական բաժանմունքները և ինտեսիվ թերապիայի բաժինը:

Նկուղային հարկում նախատեսվում է ախտորոշիչ բաժանմունք թեքահարթակով՝ սարքավորումները տեղափոխող մեքենայի համար նախատեսված մոտեցմամբ, կենտրոնական մանրէազերծման բլոկ, որը բեռնատար վերելակներով կկապվի երկրորդ հարկի ծնարանային և չորրոդ հարկի վիրահատական հատվածին: Նկուղային հարկում նախատեսվում են նաև լաբորատորիաները:

Բժշկական կենտրոնը կունենա 3 ատիճանավանդակ, որոնց դռները կլինեն հակահրդեհային և ինքնափակվող, 3 վերելակ և 2 բեռնատար վերելակ:

Բժշկական կենտրոնի բոլոր բաժանմունքները կապված կլինեն միմյանց հետ:

Դրսում նախատեսվում է աստիճաններ և թեքահրաթակներ:

Հողամասում առկա է նոր կառուցված 40.0 քմ մակերեսով կաթսայատուն: Նախատեսվում է կաթսայատան հզորացում՝ գազի կաթսաների լրացուցիչ տեղակայմամբ, նոր հիվանդանոցի մասնաշենքի ջերմամատակարարման և էներգախնայողության պահանջների բավարարումն ապահովելու նպատակով: Նոր կաթսաների տեղադրումը կիրականացվի կաթսայատան ընդհանուր շենքաշինական և տեխնոլոգիական պայմաններին համապատասխան:

Տարածքում առկա են ապմոնտաժման ենթակա շենք-շինություններ:

Գործունեության իրականացման տարածքում առկա են մեծապես վնասված կամ չորացած 10-12 հատ փոքր ծառեր, որոնք նախատեսվում է հատել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Բժշկական կենտրոնի ջրամատակարարմնան համար գոյություն ունի նոր կառուցված պոմպակայան, որից կմիացվեն նաև նոր մասնաշենքի ջրամատակարարման խողովակները, նախատեսվում են նաև նոր պոմպերի տեղադրում: Գոյություն ունեցող նոր կառուցված սառը և տաք ջրի գծերին կմիացվեն նաև նոր մասնաշենքի գծերը:

Ջրահեռացման համակարգը նախատեսվում է միացնել արդեն իսկ նոր կառուցված կոյուղագծերին:

Շինարարության փուլում ջրի ջրառը կիրականացվի «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն, իսկ կանաչապատ տարածքների ոռոգումը՝ «Արագածոտն» ՋՈԸ-ի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա:

Էլեկտրամատակարարման համար միացումները կիրականացվեն հողամասին կից գոյություն ունեցող էլ. կայանից:

Գազամատակարարման միացումները նախատեսվում է իրականացնել տարածքում գոյություն ունեցող գծերից:

Բժշկական կենտրոնում նախատեսվում է օդափոխության կենտրոնացված համակարգ:

Նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում կիրականացվեն հողային աշխատանքներ, ինչի արդյուքնում հանվող գրունտի և հողի քանակը ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում կկազմի 30415 մ³ ծավալ: Հանված հողային հանույթը կպահվի տարածքում նախատեսված համապատասխան վայրերում, իսկ ոչ

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

պիտանի հանույթը կտեղափովի Աշտարակի համայնքապետարանի կողմից նախատեսված աղբավայր:

Բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայր հիմնական արտանետումները կհանդիսանան փոշին, ինչը կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում, և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ առաջացող դիզվառելիքի այրման արգասիքները՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդները, պինդ մասնիկները: Հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկայի և ավտոմեքենաների պարբերաբար ստուգում, շարժիչների կարգավորում և այլն:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում են շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

-շինարարական հրապարակների պարսպապատում, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների ծածկում շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվացում,
- ավազի, ցեմենտի, գաջի, խիճի, սորուն նյութերի և շինարարական աղբի տեղափոխում փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով, սորուն նյութերի (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորում փակ տարածքներում կամ ծածկում անթափանց թաղանթներով,
- օրվա ընթացքում շինարարական հրապարակի պարբերաբար ջրում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս և այլն:

Նախատեսված բնապահպանական միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Գնահատման հաշվետվության համաձայն նախատեսվում են իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները, որոնց իրականացման հաճախականության, մեթոդների, մշադիտարկում իրականացնելու գործունեության վայրի վերաբերյալ տեղեկատվություններն առավել մանրամասն ներկայացված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, գործունեության ենթակա տարածքում կառաջանան հետևյալ թափոնատեսակները՝ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափողվի համայնքային կոշտ կենցաղային թափոնների աղբավայր, շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ, որը կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (բնական աղետներ (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ, հրդեհների առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք,

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

աշխատողների վնասվածքներ և շահագործվող տեխնիկայի վթարներ, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխություն՝ քամու ուժեղացում, փոթորիկ և այլն) և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի, աղմուկի և թրթռումների առաջացման դեպքում ևս նախատեսվում են համապատասխան մեղամցոնղ միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեվում է իրականացման տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լսումներն իրականացվել են Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի ղեկավարի նստավայրում:

Հանրային լսումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, Աշտարակի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմանների պահանջները:
4. Շինարարության աշխատանքների համար անհրաժեշտ բետոնախառնուրդի տեղափոխումը իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

5. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
6. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան, ծառերի հատման, տնկման աշխատանքներն իրականացնել՝ Աշտարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
7. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի Գ. Նարեկացու փողոց հասցեում նախատեսվող բժշկական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան